56 (1147). ՓԵԹԱԿ, ՄԵՂՈՒՆԵՐ

Նիղ փողան, էրգեն սողան,
Սըրկըվագնիբ մեճ՝ գտոդան:

57 (1148). ՕՁ

Զլէ զմբիլ, նխշուն թումբան.
Ո՛չ դրս ունը, ո՛չ էլ՝ իման:

58 (1148). ՕՁ

Ձընգլը պիրեռ,
Վիզն՝ ըրըրի,
Լեզուն՝ դաջգի:

59 (1149). ԱՐԵՎԻ ՇՈՂ

Օսկե սուն՝ մդաւմ դուն:

60 (1150). ՈՉԻԼ, ԵՂՈՒՆԳՆԵՐ

Սար ու ծորեն ընգնի՝ չճարսի,
Էրգու քրրի արանկ ընգավ՝ գճարաի:

61 (1151). ՀՐԱՑԱՆԻ ԿՐԱԿՈՑ, ՊԱՐԿՈՒՃ

Էշ գկոը, փշկուլ օռուն՝ գ'ֆոր:

62 (1152). ԹՈՆՐԻ ԱԿ

Գոխկիր կլոր, մեճ լը՝ ձուգ,
Ախմախ չէղնիս՝ գըսիս ագ:

ԱՂՈԹՔՆԵՐ

1 (1153). ՋԱՐ ԱՋՔԻ ԱՂՈԹՔ

1

Չար աչքը՝ չար փշին,
Չար փուշը՝ չար կրագին,
Չաբ կրագ դանին
Անդունդք խորանին,
Աներևույթ գանի:
Գայինք քաղաք բաշարանքի,
Մեր դերն էգավ՝ մոնթին թագի,
Խոսքէ - խոսք ենք բադարակի:
Չար աչքը՝ չար փշին,
Չար փուշը՝ չար կրագին,
Չար կրագ դանին
Անդունդք խորանին
Աներևույթ դարձնի:
Սողոմոն բադարագին
Աչքով դվոդի աչքը՝ տրաքի,
Մարտ է՝ թիգնամեջքին,
Կնիգ է՝ ծծի դագին:
Չար աչքը՝ չար փշին,
Չար փուշը՝ չար կրուգին,
Չար կրագ դանին
Անդունդք խորանին,
Աներևույթ գանի:

2 (1154).

2

Չար աչքն ի չար փուշ,
Փուշն ի պոց գրագ,
Պոցն ի աբառուժ քար,
Քարն ի՝ էլման ձով,
Ձովն ի չիք զմմեն:
Բըհըրան էղ սբ կիսի:
Ամե՛ն:

3 (1155).

3

Աստվա՛ձ, ըմ հըվար քու դուռ,
Փրգէ կիս չաբ աճկի՛ց,
Չար մարտո՛ւց, չար նիաթի՛ց:

4 (1156).

4

Օրշնյալ դե՛ր, սուրբ Քրիստո՛ս,
Աստվա՛ձ, տու ազատիս ամեն չարից,
Ամե՛ն փորձանքից, ամե՛ն չարխադից:

5 (1157). ԾՆՆԴԿԱՆԻ*

1

Հիսուս, Մայրաս տու կուս ես,
Անդադար բարեիւոս ես,
Աստվաձաձին օրշնէ կքեկ,
Օրշնաձ ջրով ցողվէ,
Աուրպ աղոտկով պայէ,
Ամեն չարից փրգէ:
Օրշնաձ կանանց օրշնաձ պդուղ որովայնին,
Կուս, մաքուր Մայրաս աստվաձաձին՝
Բարեիուսյալ էղնի**:

6 (1158).

2

Տաք հացի հուդ գիքա,
Էլեք դեսեք օ՞վ գիքա,
Մեգ Հիսուս, մեգ՝ Քրիստոս,
Ադենակալ բոկ ձիավոր,
Սբ. Սարգիսն էր՝ շրճաւվ քարով.
- Տեր ո՞ւր կէրթաս աշագերդով:
- Դուռն հիվնդին,
- Հէրդիկ տղոցկանին
Բսկնիս քցեմ վերե բարձին,
Օր չխաւկէ կիս,
Չփագէ լեկուն բիրնիս:

7 (1159). ՔՆԻ

1

Իմ տեր՝ իոբունկ քուն,
Ավեւրան գլխուն,
Շուրջաւ ու ծաձկոց,
Դավական ու դոան փագ:
Իմ տերն՝ սլսհաբան
Իմ տուն ու տեխին,
Իմ տեղ ու բաբձին,
Կուս, մաքուր Մայրաւ սուտվաձաձնա ձեռնով,
Սբ. Ցոտ վերքի ձեռնով,
Ադանաֆակ բոկ ձիավոր Սբ. Սարգսի ձեռնով,
Փբգա, ապադա կուրից, բուխտնից, անօբենի ձեռից,
Գապանի բերնից, ամեն շաւռից, ամեն ցավից:

8 (1160).

2

Էրգնու տուռ՝ բացուգ է,
Օսկէ աթոռ դրուգ է,
Քրիստոս՝ վբեն նստուգ է,
Մենձ ու փոքր եաշվուգ է:
Մեղա աստու, մեղա աստու,
Խոստովանիմ սուռաձ աստուն՝
Դժոխքի դռնից ընցա,
Դրախտի դուռ հասա,
Աջ պահաբան. ձախ պահաբան.
Հիսուսի գավական՝
Գլխուս պահաբան:

9 (1161). ՎԱԽԻ

Թապա եաց հոդ էգավ,
Էլեք տեսեք վո՞վ էգավ,
Էգան իրեք բոկ ձիավոր,
Կանաչ - կարմիր կամավոր,
Մեգ Հիսուս, մեգ՝ Քրիստոս,
Ընձային աստվաձաձին,
Էլան սարով, իճան՝ դաբով,
Հրիշտագն էր՝ առճի բարով,
- Տէր ո՞ւր կէրթաս:
- Անձղներով,
- Կէրթամ դուռն ի եիվնդին,
Բսկնիք թալիմ՝ հեդե բարձին,
Չվախենա, կիս չիաւկէ:

10 (1162).

Է՜յ դաւկ եաց ու բաղ սուֆրը,
Խնսաիբկ էղնիս առ աստվաձ,
Ասսու աճկ էղնի՝
Մըր մալ ու մուլքին,
Քոչ ու քուլֆաին,
Նաջարին ու բեջարին*:

11 (1163).

1

Է՜յ Մաբուաւկու սբ. Աստվաձաձի՜ն,
Էգեր իմ՝ քու տուռ,
Հեռու. բըհիս հըրըմուց,
Կոյոոից, չոռ ու ցավից,
Դիբամոր յարից, է՛լ բեթարից:

12 (1164).

2

Փառք ու շուքուր աստվաձ,
Զորավոր սբ. Կարաբեդ,
Բըհըբան էղնիս ըմ օրտոց:
Անփորձանկ աբբին, անդիս
Թշնամուց, անօբաց:

13 (1165).

Օրշնիմ՝ լավանաս.
Չոբս գատա գողնաս,
Ցրս ուդիմ՝ տու լավնաս:

---

*Ծննդկանի, քնի, վախի աղոթքները և մանկաբուժությունի մի քանի հավատալիքները (կոխի, վախի, նետ դնելու) գրառել ենք Ակունքում՝ շնորհալի դանասաց Հոռոմսիմ Մանուկյանից: Ծնողները գաղթել են Մշո Աղջանից (Ծան. կազմողի):

**Ես սովորեր իմ.իմ.մորից, հեղո ինձ էրազով.ա տված, ժողովուրտ, օր գուկա իմ.մոդ՝ վախ գալենեմ, մոմ գբասեմ, կաղոթեմ, ժողովուրտ գոյ կէղնի. տղոցկանի աղոտկ կէնեմ, քնի աղոտկ (Ծան. բանասացի):

* Հաց թխելիս՝ աղոթում.էր Կաժե Խաչատրյանը: